

ԼԵՂՈՒԱԲԱՆԱԿԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ՆՅՐԴԱԸՆԱԿՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱԸՆ ԹՈՒՒԲԱՆԱԿԱՆ ՀԱՅՈՒՄ

Լեղուի մը նայնաւորներուն կամ բաղաձայններուն քանա-
կութիւնը, անոնց խրաքանչիւրին մասներուն հետ ունեցած
համեմատութիւնը Կ՝որոշելու, հետեւաբար նոյն լեղուին
ներդաշնակութեան աստիճանը գտնելու: համար պարզ միջոց
մը կայ՝ որ թէև շատ նանձրանալի է, (Ճանրաթուհ, աշխա-
տասէր և անձնուէր գիտունին համար չէ խօսքս), Բայց շատ
ալ ապահով արդիւնք մը կ'ընծայէ: Այն է՝ համրել որոշ հա-
տուածի մը մէջ գտնուած տաւերուն թիւը և թուաբա-
նական հաշուով կազմել անոնց համեմատական տարրուակը, ինչ
պէս ըրած է Whitney սանսիբիտ լեղուին համար: (Տես իր
Սանսիբիտ քերականութիւնը):

«Բանասէր»ի ընթերցողներուն հետաքրքրական նիւթ մը
մատակարարելու, միւս կողմէ հայերէն լեղուի անմղակ մնա-
ցած մէկ խնդիրն ալ ուսուծեասիրած լինելու համար յանձն
առի սոյն աշխատութիւնը, զոր և այստեղ կը ներկայացնեմ:

Քննութեանս առարկայ եղած է հայ լեղուին հնա-
գոյն վիճակը. այն՝ որ երևան կուգայ ոսկեղէն դարու
առաջին Թարգմանչաց ոսկեղինի/ի գրիչներուն տակ՝ իր

ափնէն մաքուր, ափնէն անարատ, ափնէն աւելի բնիչ ու
 անխառն ձևին մը: Աստ այսմ Եղիշէ, Փարպեցի, Խորենա-
 ցի, Մամբրէ, Յովհան Մանդակոյնի, Դաւիթ անյաղթ և ու-
 թիշ համեմատաբար յետնագոյն մատենագիրներ մեր հա-
 շուէն դուրս կը մնան: Բայց որովհետև նոյն իսկ մեր
 ընտրած շրջանին մատենագրութիւնը ոճով և ձևով բազ-
 մազան պէսպիսութիւններ, կամ նր-թին իսկ պատճառա-
 բազմաթիւ կրկնութիւններ կ'ընձայէ, ասոնցմէ ևս ընտրու-
 ած են այնպիսի հատուածներ՝ որոնց մըջ կարելի եղածին
 չափ նուազ վնին յատուկ անուանել և նոյն բառերու
 կրկնութիւններ, որով և ներկայացուցած ըլլանք այն ժամա-
 նակի սովորական լեզուին պատկերը: Այս պատճառա-
 չէնք առած Ագաթանգեղոս, Բուզանդ, Կորիւն, Հին Կոս-
 կարան և:

Մեր քննութեան մըջ մտած են հետևեալ 8 հատուածները.

1. Գործք Առաքելոցէն՝ Գլուխ ԺԵ, համար 16-34. « և
 (յԱթնս) ի մնալն նոցա (Պաղոսի)... անկեալք ի նա հաս-
 տացին »
2. նոյնպէս Գործք Առաքելոցէն Գլուխ ԻԸ, համար 1-
 10. « յայնժամ զհոսացաք թէ... որ ինչ պէտք էին: »
3. Եղնկայ կողբացւոյ Առաքին Գրքին առաքին երեք Գլուխ-
 ները՝ ուր Եղնիկի Բովանդակ Ճարտարութիւնը ամփոփուած
 է. « Յորժամ զաներևութն... ընդ չորս անկրնս տի-
 եզերաց արշաւեցուցանել: » Տիպ վննես. 1826, էջ 5-18.
4. Սեբեքիանոսի Եպիսկոպոսի Եմեսացւոյ Ճառ Ա. ի մեծի

աւուր Ճրագաւուցին, խօսեցեալ յԵրուսաղէմ վասն հաւատոյ և ի հօրէ ծննդեանն . մէկ էջ . «այլ թերևս պարտ և պատշաճ իցի ... և դուք արժանի արարէք լինել :»

5. Կիրօղի Երուսաղէմացւոյ կոչումն ընծայութեան . Ճառ Ա . Որք եկեալ էին կնիք առնուլ յԵրուսաղէմ մատուցելոց . «Աղափերոսք նորոց կտակարանաց ... օրհնութեան ընդ փեսաւերսն :» Վեճնա, 1832 .

6. Նորին կիրօղի Ճառ Երրորդ . Ասացեալ վասն Սրտութեան . «Ուրախ լիցին երկինք և ցնծացէ երկիր ... խոնարհութեան մեծութիւնք :»

7. Արքայն Յովհաննու Ոսկերեքանի Մատթէոսի մեկնութենէն՝ Ճառ Բ, (Գիրք Ա, էջ 18-20, Վեճնարկ. 1826), — Գիրք լինելոյ Յիսուսի փրկաստան որդւոյ Դաւթի որդւոյ Աբրահամո . «Երկեցէք արդեօք զպատուէրն՝ զոր տուաք ձեզ ... զի՞ այդչափ փութաս յանձնուս մտանել :»

8. Արքայն Բարսղի կեսարացւոյ վեցօրէից Ճառերէն՝ Ճառ Դ . «Ազգի ազգի տեսիլք մուկցիք ... արորժեւոյ ընդին լինիցին ունկնդիրք :» Վեճնարկ 1830 :

Այս հատուածներուն ամբողջութիւնը կը պարունակէ 17,196 տառերու հաւաքում մը կամ՝ և, աւ, իւ, ու, այ, ոյ, եա մէկ մէկ ձայն հաշուելով, հաշուելով նմանապէս անգիր ը-երը, ընդ ամենը 16,339 ձայն . ինչ որ կը կազմէ տպագրական գրեթէ ամբողջ թերթ մը : Ասոնց մէջ ա-երուն թիւը ճիշտ 2000 է և ը՝ 200 :

Մեր հաշուին մը նկատի առինք տառերուն ո՛չ թէ այժմ

եան այլափոխեալ հնչումը, այլ այն որ ունէր հայ լեզու-ն
 Ոսկեդարու շրջանին և զոր լեզու-աբանական ու բանասիրա-
 փան քննութիւնները երեւան հասած են. այսպէս՝ աւ, և, իւ
 երկբարբառներ են, ուստի և պէտք չէ հնչել աւ, իւ,
իւ, ինչպէս այժմ սովորութիւն ունինք հնչելու վասնզի այս
 պարագային մեր ցանկին մը չպիտի կարողանային իբր առան-
 ձին տարր ներկայանալ, այլ լուծուելով իրենց մասերուն՝
 պիտի անցնէին ա, ե, յ, ի, ւ ձայներուն հաղուին մը. նոյն
 պէս իմանալու է նաև ու, եւ, ոյ, այ և՛ ձայներուն հա-
 մար: ինչպէս ինքնուրիշ, բոլոր ասոնք իբր առանձին և ան-
 կախ հնչիւններ նշանակուած են մեր ցանկին մը:

Գալով յ և ւ տառերուն, ասոնցմէ առաջինը ինքնա-
 յացճի բառասկզբի յ-ն, որ երկբարբառի մաս չի կազմեր.
 այլ բոլորովին անկախ է: Իսկ երկրորդը հոգւոյ, որդւոյ և՛ բա-
 րերուն մը պատահած է տառն է. Պատշաճ դատեցի՞ք նաև
 առանձին նշանակել օ ձայնը՝ որ ուրիշ բան չէ, բայց եթէ
 նոյն աւ երկբարբառը՝ բաղաձայնի քով:

Անցնինք այժմ ը գրին: Խնդիր է թէ հին ձայերն ինչպէս
 ինչ հնչէին երկու կամ ասելի յարդրական բաղաձայններու խումբ
 մը. այսինքն ինչպէս ինչ հնչէին Օրինակ՝ գլուխ, հարսն, ծանր,
 ընթուլ, զնչոյնչէնուորսլան և՛ այսպիսի բառեր, զորոնք մեզ
 այժմ ինչ կարդանք գլուխ, հարսն, ընթուլուլ, զնչուլուլուլու-
 ընչուլուլ և՛: Քրնայ կարծուիլ թէ հին ձայերը մեզմէ ասելի արագ
 և փոթորտ առողջանութեամբ մը կ'արտասանէին գլուխ, հարսն,
 ընթուլ և՛. կրնայ կարծուիլ սակայն նաև որ մեր այժմեան ըն-

Թերցուածքը անոնց ալ սովորական ձևն ըլլար: Թեպետեալ յօդուս-
 ծիս հեղինակը համաձայն է միմիայն առաջին կարծեւքին, Բայց
 և այնպէս ներկայ ցուցադրու մէջ՝ գրուած է տառը (Ը՛՛՛, Ը՛՛՛
 Կ՛՛՛ և Բառերուն մէջ) և անգիր Ը-ն (Գըւ-ի Բառին մէջ)
 առանձին առանձին նշանակուած են. վերջինը չիլտ այժմ՝
 եան հնչման հատման՝ Գըւ-ի, Ժ-ն ԸԻ և՛. սակայն ստանալ-
 ստոյգ և՛ համարուած են ոչ իբր ըստ-նալ, ըստոյգ,
 ինչպէս այժմ կը հնչեցնէ, այլ միայն ստոյգ, ստանալ՝ որ
 հիներուն գործածական ձևն էր անշուշտ:

Երկու կարգ թուանշաններ ունի ցուցադր. առաջին կարգին
 մէջ հատմանտարեան եզր առնուած է ա-ին քանակութեանը.
 կը նշանակէ թէ, երբ խօսքի մը մէջ հարիւր հաստ և ձայնը
 զտնուի, հատմանտարք քանի՞ Ը, քանի՞ Գ, և՛ պիտի գտնուին,
 իսկ երկրորդին մէջ բազմատարեան հիմը խօսքի մը ձայներուն
 համագումարն է. կը նշանակէ թէ՛ երբ խօսքի մը մէջ 100
 ձայն գտնուի, անոնցմէ քանի՞ հատը և՛ է, քանի՞ Ը, քանի՞
 Գ և՛:

Ցուցադրու կը տեսնուի նաև որ 100 ձայնէ բաղկացած խօս-
 քի մը մէջ (Ը-երը գրուած թէ անգիր միշտ միասին հաշուելով)
 ձայնաւորներուն ընդհանուր գումարը %ին 36,760 է. երկրոր-
 րդներունը՝ %ին 3,294. իսկ բաղաձայններունը՝ %ին 54,344:
 Նոյնպէս նաև թէ երբ խօսքի մը մէջ հարիւր անգամ և՛ ձայնը
 կայ, նոյն խօսքին մէջ զտնուած Բոլոր ձայնաւորներուն գումարը
 (ա-ը միասին հաշուելով)՝ 300,35 է. երկրորդներունը՝
 67,80. Բաղաձայններունը՝ 448,80. ուստի և նոյն խօսքը կը

պարունակի ընդամենը 816,95 ձայն:

Յուցակիս տուած վերջին արդիւնքը՝ այսինքն % 54 բաղա-
 ձայն . հայերէնի միջ միջնարական է . ասով հայերէնը կ'անցնի
 ներդաշնակ լեզուներու խումբին մէջ :

Օրործածութեան քանակութեան հոլմբ ահաւասիկ մեր ձայնե-
 րուն կարեգը .

ւ , ձ , ը , ի , լ , է , ե , ո , ճ , ս , ց , ու , չ , լ , շ , ւ , ղ , յ , ի , է ,
 Լ , ու , ջ , շ , է , Բ , ու , զ , ճ , ու , ի , ա , շ , յ , շ , ի , ծ ,
 շ , ու , օ , ժ , Յ , ջ , փ , ք , օ , ւ , փ :

աւերուն գումարը 100էն .

ձայներուն գումարը 100էն .

ա	100	12,240 %
բ	40	1,224
գ	8,85	1,083
դ	10,25	1,254
ե	39,45	4,828
զ	20,7	2,539
է	16,9	2,068
ը	Յրոսած 43	5,263
ը	Քրոսած 2,5	0,305
թ	13,45	1,646
ժ	2,9	0,355
ի	44,9	5,496
լ	19,75	2,417
խ	5,85	0,716
ծ	5,5	0,673
կ	21,7	2,656
հ	8,65	1,058
ձ	2,35	0,348
շ	8,75	0,826
ռ	1,95	0,239
ճ	27,85	3,409
յ	8,55	0,801
ը	26,85	10,631
ը	6	0,734
"	31,1	3,806
չ	11,95	1,462
պ	3,05	1,107
զ	2,8	0,342

— Կրուն գումարը 100 Բ.:

Հարկերու գումարը 100 Բ.:

ա	2,4	1,028
ս	27,6	3,378
վ	6,45	0,667
տ	20,65	2,527
բ	53,35	6,530
ց	22,8	2,790
ւ	0,7	0,085
փ	2,55	0,312
ժ	17,1	2,033
կ	21,55	2,637
օ	4,45	0,544
աւ	6,9	0,844
խ	7	0,854
տւ	22,5	2,754
եւ	10,2	1,248
ոյ	5,35	0,654
այ	12,35	1,511
Յ	0	0

Իջարկութիւն 4 Մարտ 99.

ՀՐԱՅԵԱՅ 8. ԱՃԱՌՈՒԱՅ

“ Բ Ա Ջ Մ Ա Վ Է Դ ”

Տարեկան բաժնեգրին է՝ 10 ֆր.
 Կը հրատարակուի ամիս անգամ:
 Գրիճի՝ Rédaction du Bazmavep
 St.-Lazare. VENISE.

“ Բ Ի Ի Ր Ա Կ Ե ”

Տարեկան բաժնեգրին է՝ 15 ֆր.
 Կը հրատարակուի ամիս շարժում:
 Գրիճի՝ Direction du Burakha
 Kazakh-han. Constantinople.

“ Հ Ա Ն Դ Ե Ս Ա Մ Ս Օ Ր Ե Ա Յ ”

Տարեկան բաժնեգրին է՝ 10 ֆր.
 Կը հրատարակուի ամիս անգամ:
 Գրիճի՝ Rédaction du Handess
 VII/2 Mechtharistengasse 4. WIEN.